

ԲԱՅՆԵԳԻՆ

ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ. 50 ռ.
Վեցամս. 25 "

ՄԱՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկ. 13 ֆր.
Վեցամս. 7 "

Ամերիկա

2 Տղ. 30 սենդ

ԿԱՆԻՍԿ

Թիւր 1 Ղրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր

Ծանուցումներ
մասնաւոր պայ
մաններով

Հասցէ

DIRAN
PA-PAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ՅԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄ. 26 ՀԻՆԳՇԱՐԹԻ 1903

ԹԻԻ 283

ՀԱՆԴԵՍ

ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԵԱՆ

ՎՍԵՄ. ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅ ԲԷԻՋԵԱՆԻ

Տեղւոյս Խառն դատարանի վերաքննիչ ատենի առաջնակարգ խորհրդական հանգուցեալ Վսեմ. Կարապետ Պէյ Բէիզեանի յուղարկաւորութեան տխուր հանգէսը կատարուեցաւ անցեալ չաբաթ օրը, նախագահութեամբ Եգիպտոսի Առաջնորդ Գեր. Այվազեան Սրբազանի, իր շուրջըն ունենալով Գեր. Տ. Վահրամ և Տ. Բարթոլէմիոս վարդապետները և Եգիպտահայ քահանայից դասը:

Թափորը առաւօտեան ժամը 9ին Բէիզեանց ապարանքէն ճամբայ ելաւ դէպի Եկեղեցի, հետեւալ կարգաւ:

Ամենէն առաջ 10 ձիաւոր արաբական զօրքեր երկու կողմէն ճամբայ կը բանային. անոնց կը հետեւէին 12 հսկայ պսակներ՝ որոց ամեն մէկը երկու կամ երեք անձինք կը տանէին. այս պսակներուն մէկ մասը զրկուած էին տեղական և ամբողջ Եգիպտոսի Խառն դատարաններու վարչութեանց և մէկ մասն ալ հանգուցելոյն ազգականաց և մտերիմներու կողմէ: Պսակակիրներու կը յաջորդէին գաղազի և չալուշի Խառն դատարանի և միսրաբ. անոնցմէ ետքը տեղւոյս Ազգ. վարժարանաց երկսեռ աշակերտք, իրենց

ամբողջ ուսուցչական մարմնով, որոնց կը հետեւէին դպրաց ու կղերականաց դասը. Անոնցմէ ետքը տեղւոյս Թաղ. Խնամակալութեան և Ազգատախնամի մարմինները. յետոյ քաղաքիս Վսեմ. Դեր. Կառավարիչը, Արդարութեան նախարարութեան պատուիրակը, Ատենի պատուակալ, նախագարը, Վերաքննիչ ատենի նախագահը, դերոնախագահը և Ընդհ. դատախազը որոնք դադարին Ա. ծածկոցը կը տանէին, իսկ Բ. ծածկոցը կը տանէին Ալի պէյ Ֆախրի և Վապլա պէյ, ատենի խորհրդական, Վսեմ. Եուսուֆ պէյ Զըրաքեան և Պ. Էման խառն դատարանաց Ա. սենեակի նախագահ և դատաւոր. ասոնց կը հետեւէին Խառն դատարանի ամբողջ պաշտօնէութիւնը իր պաշտօնական համազգեստներով. որմէ վերջ կը յառաջանային Վսեմ. Յակոբ Պէյ Բարթոլէմիոս, Մեծ. Լեւոն Էֆ. Նիզամեան և Միհրան Էֆ. Թէլեան. Յետոյ կը յառաջանար վեց ձիերու լծուած դադաղակիր զեղակերտ կառքը, որուն պատուհաններու ծոպերը բռնած էին հայ և օսաւրազի վեց առաջնակարգ անձնաւորութիւնք:

Դադաղակիր կառքէն անմիջապէս ետքը կուգային հանգուցելոյն տխրազաց եղբայրները՝ Վսեմ. Միքայէլ և Արթին Պէյ Բէիզեան, իրենց երկու կողմն ունենալով Վսեմ. Պօլոս բաշա Նուպար և Վսեմ. Աբրահամ բաշա Բարթոլէմիոսներն ալ հետիոտն. անոնց կը հետեւէին նոյնպէս հետիոտն դեսպանական, հիւպատոսական և ամբողջ Եգիպտական պանքաներու ներկայացուցիչք, այս տխուր տաթիւ Գահիրէէն եկող դա-

տարանի առաջնակարգ պաշտօնեաներ, իրենց պետին՝ Ազիլ պէյի հետ, որոնց մէջ կը տեսնուէին Վսեմ. Զարեհ պէյ Սվազլը, Վսեմ. Միհրան Խան Գալֆանեան, Մեծ. Տեարք Մութաֆֆ, Մատթէոսեան, Կամսարական եղբարք, Մելքոնեան, Իբէքեան, Ղազարեան և այլ հայ և օտարազգի առաջնակարգ անձնաւորութիւնք, որոնց կը հետեւէր ամեն ազգէ ժողովրդեան սատար բաղմութիւն մը:

Թափորը միօրինակ կտնոնաւորութեամբ յառաջացաւ մինչեւ Եկեղեցի, ուր արարողութիւնք կատարուելէ վերջ, այս անգամ յուղարկաւորաց մեծագոյն մասը կառքերով մինչեւ գերեզմանատուն հետեւեցան դադարին որ յատկապէս պատրաստուած դամբանին մէջ ամփոփուեցաւ:

Գերեզմանատան մէջ նախ դամբանականը խօսեցաւ Առաջնորդ Սրբազանը, թուելով հանգուցելոյն բարեմասնութիւնները, ապա ֆրանսերէն լեզուաւ դամբանականներ խօսուեցան որոնցմէ Դատարանի նախագահին և ընդհ. դատախազինը աւելի նշանակալից էին:

Նոյն օրը քաղաքիս արդարութեան պալատը ի նշան սգոյ մինչև իրիկուն գոց ըլլալով, դրօշակն ալ սև շղարչի մէջ առնուած ու կէս մը պարզուած էր:

Վսեմ. Կարապետ պէյ Բէիզեանի մահուամբ Եգիպտոսեան Հայը կը կորսնցնէ իր ազգեցիկ և յարգելի անդամներէն մին որ նոյնպէս մեծ յարգ կը վայելէր միջազգային ամէն շրջանակներու մէջ:

Խմբագրութիւնս Եգիպտոսայ հասարակութեան ցաւակցական զգացումներուն թարգման հանգիստանալով, կը փութայ իր անկեղծ ցաւակցութիւնը յայտնել Բէիզեան գերդաստանին:

* *

Ն. Վսեմ. Պողոս Բաշա Նուպար՝ այս տխուր առթիւ 100 ոսկի նուիրած է աղքատաց բաժնուելու համար:

Ն. Վսեմ. Աբրահամ Բաշա Բարթող ալ 4 ոսկի նուիրած է Աղքատախնամին:

* *

Փոխան ծաղկեպառակի

Տիարք Ազարեան եղբարք 20 ֆրանք նուիրած են Զէյթունի Բարեսիրացին. Փափաքելի է

որ սոյնօրինակ նուիրատուութիւնք իրենց հետեւողներն ունենան:

* *

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Բէիզեան ընտանիքը իր զգածեալ շնորհակալութիւնները կը մատուցանէ այն ամէն ազնիւ ազգայիններուն որոնք ողբացեալ ԿԱՐԱՊԵՏ ՊԷՅՐԷԻԶԵԱՆԻ մահուան և յուղանկաւորութեան առթիւ իրենց համակրանքը և ցաւակցութիւնն յայտնեցին հանգուցելոյն պարագայից:

ԱԶԳԱՅԻՆ

Պուկարիոյ Հայոց Առաջնորդ ընտրուած է Տ. Ներսէս Եգիպտոս Աօլանեան:

Թիֆլիզի մէջ մեռեր է Յարութիւն Շամխարեան՝ 250 հազար ռուպլիի հարստութիւն ձեռքելով կնոջն, որուն մահուանէն ետքը այդ գումարը պիտի յատկացուի ժողովրդական կրթութեան և հիւանդանոցի համար:

— Եաֆաի աւստրիական հիւպատոս Պ. Բասկալ Մուրաանի քոյրը՝ Աննա խաթուն՝ 90 տարեկան մեռնելով մարմինը Երուսաղէմ փոխադրուեր ու հոն թաղուեր է:

— Պատրիարքարանի կողմէ Երուսաղէմ քննիչ զրկուած դիւանապետ Բարթող էֆ. Խէլեան իր պաշտօնը կատարած ըլլալով, այս շաբթու պիտի մեկնի եղբր դէպի Պոլիս:

— Տեղւոյս Զէյթունի Բարեսիրաց ընկերութեան ընդհ. ժողովը ի նիստ հրաւիրուած է յառաջիկայ կիրակի առաւօտ ժամը 10ին, վարժարանի սրահին մէջ:

— Յառաջիկայ շաբաթ դիշեր Բիրամիտ թատրոնին մէջ պիտի ներկայացուի Արշակ Բ. ողբերգութիւնը որ Վսեմ. Կարապետ պէյ Բէիզեանի մահուան պատճառաւ յետաձգուած էր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բարիզէն նոյ. 23 թուականաւ կը հեռագրեն թէ Պ. Տէլքասէ շատ մը կարեւոր յայտարարութիւններ ըրած է խորհրդարանին մէջ, որոնք ամենքն ալ ընդունուած են։ Մարոքի մասին ըսած է որ «Վերջին բառը Ֆրանսայի կիշնայ»։ «Մակեդոնական խնդրոյն կարգադրութեանը համար Ֆրանսա նեցուկը պիտի տայ Աւստրիոյ և Ռուսիոյ Անկլո-Ֆրանսական վէճերուն Լահէյի իրաւարարութեան դաշնագիրը հետեանքն է այս երկու մեծ ազդերուն մերձեցումին, թէ և չափազանց կարեւորութիւն աւելու չէ անոր, Ֆրանսան սերտիւ կապուած է ռուսական դաշնակցութեան։ Կառավարութիւնները խաղաղութիւն կ'ուզեն, բայց զէնընկեցութեան մը առաջարկութիւնը Ֆրանսայէն չէ որ պիտի գայ»։

— Պօրիս Սարաֆօֆ, որուն մահը հեռագիր մը գուժած էր, քաջաւոր է։ Վերջերս Թալլինի Սօֆիայի թղթակցին հետ տեսակցութեան մը պահուն ըսած է նաև որ, տյա տարի, քանդուած գաւառներու մէջ անկարելի է վերսկսել յեղափոխութիւնը, բայց թէ միևնոյն ժամանակ Աւստրո-Ռուսական ծրագիրն ալ չափի յաջողի, քանի որ թուրքիա չուզեր ու չկրնար գործադրել, իսկ եթէ գործադրուի՝ ապստամբութիւնը կը վերջանայ։

— Տամատ Մահմուտ բաշայի որդին՝ բրէնս Լութֆուլլահ՝ Եւրոպացիի անցազրով ու ծպտեալ Ռուսական շոգենաւէն դուրս ելնելու պահուն ձերբակալուեր և ուղղակի երկտըղի պալատը տարուեր է։

— Սօֆիայէն պաշտօնապէս կը հերքուի՝ իշխանապետութեան ներքին կացութեան ծանրութեանը մասին օտար մամլոյ մէջ հրատարակուած բոլոր տեղեկութիւնները. ո՛չ Ֆէրտիմանտ իշխանին դէմ դաւ կայ եղեր և ոչ ալ սպաներու ձերբակալում. սուտ է եղեր նոյնպէս Բէթրօֆ դահլիճին անդամներուն միջև պառակտումի լուրը։

— Գերմանական հարաւային արեւմտեան Ափրիկէի գաղթավայրին մէջ՝ Հոթէնթոթ ցեղէ Պարտէլվարցներն յարձակելով Վարմպատի պահպան զօրաց վրայ՝ ամենքն ալ ջարդեր, բեր-

դըն ու գիւղը այրեր և բոլոր գերմանացի բնակիչները սպաններ են։ Անգղիացի ընտանիքներ ալ գերի ինկեր են վայրենեաց ձեռքը։

— Իտալիոյ ելմական նորընտիր նախարար Ռօզանօ գիշեր ատեն ինքզինքը սպաններ է ըզվովէրով։ Կ'ըսուի թէ անձնասպանութեան շարժառիթն եղած է իւր դէմ ընկերվարականաց պայքարն և երկու որդւոցն ընթացքը։ Կնոջն ուղղեալ նամակ մը գտնուեր է, որուն մէջ գրեր է թէ՝ ինքն պարկեշտ մարդ մ'էր եւ կը մեռնի իբրև պարկեշտ մարդ։

— Չինաստանի Չէ Բեանկի նահանգին մէջ Չինացիք միախօնարական եկեղեցի մը այրեր և տեղացի երէց մը սպաններ են։

Ծ Ի Ծ Ա Ղ

Տան մը մէջ.

Այրը. — Ձը խոստացա՞ր ինձ հնազանդիլ, եկեղեցին՝ խորանին առջև։

Տիկինը. — Այո՛, բայց հիմա հոն չենք...

Երկու բարեկամներ,

— Բայց, երբ այն դրամը ինձմէ փոխ առիք, ըսիք թէ քիչ ժամանակի համար էր։

— Այո՛, բայց ես ճշմարտութիւնը ըսի ձեզ, վասն զի կէս ժամէն աւելի չմնաց այն իմ քովս։

Մէկը կը տեսնէ որ սալօնի մը մէջ սիրուն արձան մը կայ, այնպէս ձևացուցած՝ իբր թէ Տնտեսագիտութիւն ու Պարկեշտութիւն իրար կը համբուրեն, կը դառնայ կըսէ քովի բարեկամին, «Ի՞նչ կըսես, ինձի կ'երևայ թէ՛ ան օրերուն հասեր ենք, որ այս երկուքը վերջին բարեք կուտան իրարու։

— Միւսիւ էօթէն, ինչո՞ւ համար սակարան մտնելու 1 ֆրանքի մտից տուրքը առաջ կառնեն։

— Վասն զի կը վախճան որ դուրս ելած տեսնին վրանին կուտ մը չի գտնուիր։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ՏԻԿԻՆ ՄԷՆՆՈՒՎ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ

Անցեալ երեքշաբթի առաւօտ, Նամակատան ցրուիչը՝ Սուգ-էլ-Քեասէին փողոցի տան մը Բ. յարկը բնակող ընտանիքի մը յանձնելու համար հետեւեալ հասցէով նամակ մը տուաւ գոնապա- նին.

Այրի աիկին Ղանիկ Կտկտակեան

Սուգ-էլ-Քեասէին, Թիւ . . .

Տիկին Կտկտակեան սր այն միջոցին իր աղ- ջկան՝ օր. Յասմինէի հետ առաւօտեան թէյը կառ- նէր, անմիջապէս նամակին պահարանը խզելով՝ հետեւեալը կարդաց.

«Տիկին,

Կարճ ըսեմ. 19 տարեկան զաւակս՝ 27 տա- րու աղջկանդ գլուխը փաթթելու համար դար- ձուցած ՏՕՂԱՍԿԵՐՈՒԴ ՔԱՐԻՍԻՆ գացած եմ. Գե- ղի համար զաւակիս ապսպրուած կէս տուղինա ֆիլիթիքոզ չօրապդ, խառամանտօլ ֆիլառդ ու աղջկանդ համար ալ ճիտէն կախելիք թիւը ու լավանտան՝ ամսու գլխուն ես իմ ձեռքովս պիտի բերեմ՝ ձեզի. Հիմակու հիմա սա գիտցած ըլլաք որ, ո՛ւր որ ձեզի հանդիպիմ, զորս գու պատուի- րեցեր հետերնիդ պիտի տեսնուիմ».

ՄԵՆՆՈՒ ՍԵՎԵՆԵԱՆ

Տիկին Կտկտակեան՝ աղջկանը հետ նայուածք մը փոխանակելով, ըսաւ.

—Աս ի՞նչ զէվզէկ տղայ է եղեր, քա՛. գա- ցեր մօրը իմացուցեր է. վա՛յ, վա՛յ, վո՛ւյ. բէք մեծ բան մըն էր բերելիքը. ա՛լ ասկէ ետքը հոս գործ չունի.

—Կարեորութիւն պիտի տաս չլիկ մօրը գրածին, մայրիկ.

—Կարեորութիւն չեմ տար ամա՛ անանկ չլիկին հետ ալ չեմ ուզեր չափուիլ.

Եւ իրօք նոյն իրիկունը տիկին Մէննուի տը- ղան չուկայէն վերագարծած ատենը ըստ իւր սովորութեան երբ աիկին Կտկտակեանին բնակած

յարկը ելնել կը պատրաստուէր, պօնապը (գոնա- պանը) «ա՛լ չէք կրնար ընդունուիլ տիկին կըտ- կտակեանէն» ըսելով զինքը կը ճամբէր, որով ստիպուեցաւ ախրութեամբ իրենց տունը երթալ.

Տիկին Մէննու կարեորութիւն չի տալով նոյն իրիկունը զաւակին տխուր ու սովորականէն կա- նուխ տուն վերագառնալուն, հետեւեալ առաւօտ ա՛նոր սենեակը երթալով սկսաւ խօսակցիլ.

—Սիրուն, զաւակս, քեզմէ բան մը պիտի ուզիմ ամա՛ չէ չպիտի ըսես.

—Ի՞նչ է որ.

—Ինծի մէկ տուղինա ֆիլիթիքոզ չօրապով խարսմանտօլա ֆիլառ մը առնես.

Պ. Սիրուն, իր մօրմէն առաջին անգամ ա- սանկ առաջարկ մը լսելուն վրայ զարմացած՝ ա- նոր նայեցաւ.

—Ինչո՞ւ զարմացար ետվում, ատխտարի շատ բա՛ն մըն է ուզածս. թող մէկ չըլլայ տէ՛ կէս տուղինա ըլլայ.

—Բայց գու՛ն գիտես որ ես ստակ չունիմ. առածս ի՞նչ է արդէն.

—Գիտեմ քի հիմա չունիս, բայց ամսու գը- լուխ 2 ոսկի ալլըխըդ առնես նէ՛ պիտի կրնաս շինել. Մինչև հիմա ասանկ թէքլիֆ մը ըրած չէի քեզի քի՛ քիչ մը վրայ դաս տէյի. է՛հ, կը նա- յիմ որ ըսածներս բերելու կարողութիւն ունիս.

—Ինչէ՞ն հասկցար.

—Կայնէ, պիտի ըսեմ. քրոջդ համար ալ ճիտէն կախելիք պուա (թիւ) մը ու շիշէ մը լավանտա պիտի առնես.

—Օ՛խ պապամ, Գրէտի ֆօնսիէն ինծի զար- կածի պէս, աղբօրս համար ալ խաթ մը լաթ ուզէ.

—Կայնէ քի ը. . . .

—Պղտիկ քրոջս համար ալ ֆիստան մը, շաք- խա մը.

—Էյ ուզեմ նէ ի՞նչ կըլլայ. օխտն օտար- ներուն տանելուդ՝ տունդ բերես նէ գէ՛շ կըլլայ. օխտն օտա՛րն է քեզ ադ պօյը բերողը.

—Ի՞նչ ըսել կուգես կոր մայրիկ.

—Ամսու գլխուն կը պէքլէյէս քի՛ այլըիւդ տանիս անոնց ուղուրին խարճես. կը վայլէ՞. . . մե՛ղք մեր աշխատանքին, մենք քեզ չենք նե- ղեր կոր քի վրայ դաս տէյի, գու՛ն՝ մօրդ տա- րիքը աղջկանը հետ հա՛, հա՛, հի՛, հի՛ ընելով սո- խի պէս սօյլուն տալու վրայ ես. իմացողը ի՞նչ պիտի ըսէ. բոլոր բարեկամներնիս ու ազգական-

ներնիս պիտի մեղադրեն ու վայրդ տան . ընկերներդ ալ քիթէդ բռնուեր ես տէյի վրայ պիտի խնդան .

Պ. Սիրուն վայրկեան մը շուարած մնալէ վերջ, վազեց րէտէնկութիւն քովի գրպանը պրպտեց ու բարկութեամբ դուրս ելաւ .

—Ո՛վ վերցուցեր է ասկէց այդ նամակը . . . ա՛հ, հասկցայ, եղբայրս Գէորգը, ախ, չանստակ պիտի հանեմ զինքը .

—Պօշտեղը չօճուխին մեղքը մ'առնէր . Աստուածակոյս կողմանէ եղաւ . չօճուխը խապար պիւլէ չունի, իրիկունները քու եկած ատենդ անիկա քնացած կըլլայ, ասկէց զատ քու օտադ ալ չի մտնար . մտնայ ալ նէ՛ պօյը մինչև կարտօբին չի հասնիր քի ճէպերդ խառնէ .

—Անանկ է նէ դուք կը խառնէք կոր .

—Խառնողին մատուցները կոտրի . հէ՛մ ե՛րբ կրնանք խառնել . իրիկունները հոս կը մտնաս դուռդ կը կըպես, կը պառկիս, տղտուն հագուած դուրս կելլաս .

—Է՛հ, աշխատէ որ զիս համոզես, ասկէ վերջը տուն գալու չէ, քանի որ գրպաններս կը խառնեն ու . . .

—Ձէ՛, չէ՛, բաթռալով վրայ չես կրնար ելլել, ատանկ բան մը ընես նէ՛ աշխարհքները իրար կանցունեմ, կը հասկնաս . իշթէ վերջին անգամ կըսեմ քեզի Սիրուն, մէյ մըն ալ անոնց տունը ոտք չպիտի կոխես .

—Ձեմ երթար կոր արդէն .

—Երե՛ս դարձուցին . երեսներն դառնայ պիւլէքիմ .

—Ձէ . . . բայց ես . . . չեմ ուզեր կոր երթալ .

—Բէ՛ք աղէկ կընես ես վրում, անոնք քեզի պէսներուն քանինները մոխիրի վրայ նստեցուցին .

—Միայն կ'ուզեմ հասկնալ թէ ո՛վ իմացուց այս բանը քեզի .

—Վրան կոխի՛ պիտի վազես . հօշ բան մը չես կրնար ընել .

—Ձէ՛, բայց պէտք է գիտնամ, ո՛վ ըսաւ .

—Քէթէն բանթօլօնդ վլացած օրս՝ ճէպիդ ելած աղջիկան սըբարըչլը նամակը ըսաւ . . .

ԱՍՈՒՊ



Շաքարական Հանքէս

Գրական, Գիտական եւ Մանկավարժական

Խմբագիր-Տնօրէն


ՄԻՀՐԱՆ ԱՌԲԱՆԱԶ

Ճօխ և հրահանգիչ պարունակութեամբը արտասահմանի համար իր տեսակին մէջ առաջինը եղող սոյն մանկավարժական գեղատիպ հանդէսը կուգայ մեծ պակաս մը լրացնել .

Ի սրտէ յաջողութիւն մալթելով մեր նոր պաշտօնակցին՝ Տիար Ասքանազի, շերմապէս կը յանձարենք սոյն պատուական հանդէսը որդեսէր հայրերուն որ բաժանորդագրուելով, իրենց զաւկները այս կրթական «Պարտէզ»-էն չի զրկեն .

Բաժնեգրին է եգիպտոսի համար տարեկան 60 դրշ . արտասահման 16 ֆր . կամ 6,5 ռուպլի կամ 3 տոլար .

Հասցէն է .— Խմբագրութիւն «Պարտէզ»-ի, Աղեքսանդրիա (եգիպտոս) Պագոս-Ռամլէ :



Նէ՛ վագրք գաղգամագրար

Կագեքաշար իշիւնէն ետեւն ետեւնը հաւատարմութեամբ .

Հագրք սաքրքան գահվենիկ իշիւնէն մօհուս վէ ես պագրս .

Եղիլիք գաղթընարըն պօյա սիւրիւնմէրի .

Գալմա՛ իշի մոգալմա տօլմաք քօթիւնի .

Պիպէն կիպի ման եագրճը գրչալմագրար .

Թրախօւմա խրչրքրար .

Միլլէքքերվերիլիք քասրաւան պիր քագրմ տօլմաքրքրճըրար .

Մէքթէպերիկ միզամաքգրգրար .

Նիհայէք, ագչաւմ սապար սէյիլմէքսէ օ՛

շան եկերի երգընք մօտաւոր ան՝ վագրք զաղա-
նագրար .

Բոժ. — Կեօրիսնիւն անգարեն, պունարըն՝
սիւնեանըն սօնունա զաւար զաղանագրարը եօգ
սրբ .

ՃԵՌԱԳԻՐ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ

Սուգ-էլ-Յընթ

Մէկ քանի փեսացուներ՝ տեսնելով որ ծը-
նողքները կը դժկամակին իրենց աղջիկը հեռաւոր
ուշխարհներ հարս տալու, անոնց (ծնողաց) սիր-
տը շահելու համար մինչև հիմա իրենց մէջ սո-
վորութիւն եղած զանգորեւագ բարասը 10 ոսկին
15ի բարձրացուցին .

Քալիֆօրնիա

Հոս ալ խլավուզ և կօմէսիօնճինն ր ապին
անգին ինկած հարսնցուններ համոյելու համար
հոգինին հանելու աստիճան կ'աշխատին կ'որ .

Բոժ. — Մամիկս իր ողջութեանը, անանկ-
ներուն համար՝ «հոգինին քակուի» կըսէր .

Նօքլէ

Ահռելի ամպրոպ մը երկրագործը շառաչիւ-
նով պայթեցաւ մեր գլխին .

Չարսախը փլաւ .

Մէնչիէ

Չարտախի փուղուժին ճարճատուժը մինչեւ
հոս արձագանդ տուաւ .


Բոժ. — Վա՛յ տակը մնացողին .

ՍԱՐԳԻՍ ԹԱՇՃԵԱՆ

Կը ծանուցանէ արգոյ հասարակութեան քե-
տկարծանանակ յԱթենք Սիւնիէի մեքենայի գոր-
ծարանին մէջ աշխատած ըլլալով, հիմա եկած ու
հաստատած է Եւրոպայի Զարկի վրայ, Սոյ-էլ-
Թապախին, եւ կը նորոգէ կարի ու կօշիկի մեքե-
նաներ եւ ամեն տեսակ գործիքներ, խոստանալով
զոհացնել իրեն դիմողները .

2

ՏՊԱՐԱՆ



«Հայեղի»ի սպարանին մէջ դիւրանասէլի գնով
կը սպագրուին առեւտրական տներու հաւար
ամեն շեգուն՝ Բարիգեան վերջին դրութեամբ հե-
սաբրաշարժ, պահեւազարդ եւ գունաւոր փոփ-
րիկ ազդարարութիւններ. կը սպագրուին նաեւ աշ-
ցեմսոս, հասցեսոս, հարսանեկան հրաբազիր՝
մահագր, մանկագրուի, պահարան, տնակ, եւն.
Ուրիշ ֆաղափներէ եղած յանձնարարութիւնք
աշ փոքրով կը կատարուին .

ՅԱԿՈՒ ԳԱՐԱԿԷՕԶԵՍՆ

Սուգ-էլ-Արքարին

Կը ծանուցանէ իր յարգոյ յանախորդաց քե-
ին յայես ուրիշ տարիներ, այս տարի եւս յապապես
բերել տուած է Չիկագոյ, Հեղիական եւ Սեյրա-
նի ընտիր եւ հոստէս քեյեր, որոնց գործածութիւ-
նը ներկայ եղանակիս մէջ շատ օգտաւար է .

Կը զանաւոր նաեւ մագի հաւար ընտիր ներ-
կեր ամեն գոյնէ, Գինները չափաւոր .

Հետեւեալ գիրքերը կը ծխաւորին Տիար Կա-
րապետ Աստուածատի ֆոյ . Շէրիֆ Բաշա .

Փիլիկ Աղբօր Հարսնիք	որշ. ողջ
Այինէի Լեքայիժ, հայաստ եւ	" 1,5 "
քրքարաւ գործաշիքներ	8 " "
Գրպանի Երագական	50 սնդի
Գագանձ Դօնա, գօմէսի	20 փոյ
Մահառայիքի Միքեմալար	20 "

ԱՇՈՏ ՓԱԼԱԵԱՆ

Տպագրական ամեն տեսակ գործերու կաշու-
նիս, փորագրիչ, քե տաւախի եւ քե պղինձի վրայ,
կը պատրաստուին նաեւ զանաւորական կնիք-
ներ՝ մեծադէ եւ փոքր .

Աղեքսանդրիա, Ֆրանք փողոց թիւ 22